



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱԴՐՊՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ԶՈՐՐՈՐԴ



ԻԹԷՆՈՒՄԻԱ

Իսպարսանի Խաչիպեան Ուսուցնարանի Հայոց

1861.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա Ս Տ ՈՒ Ա Մ Ա Շ ՈՒ Ն Չ Ս ՈՒՐ Ք Կ Ր Ո Ց

Գ Ա Ս Չ ՈՐՐՈՐԿ



Նոյ նահապետը տապանէն ելլելէն ետեւ սկսաւ հողագործութեան օրհնեալ արհեստին հետ ըլլալ, — որ անտարակոյս իր տրհետուն էր նաեւ շրհեղեղէն առաջ, — եւ Մասիս լեռան բարեբեր ստորոտն ու երեւանայ դաշտը ցորեն եւ ուրիշ արմտիք ցանեց :

Տեսաւ որ գետինը շատ յարմար է այգի (պաղ) տնկելու, այգի տնկեց, շատցուց, եւ անոր պտուղէն՝ այսինքն խաղողէն գինի հանելով խմեց : Կերելի որ շրհեղեղէն առաջ խաղողը կուտէին մարդիկ, բայց անկեց գինի հանելը չէին գիտեր. նոյ հնարեց . եւ գինիին ալ զօրութիւնը չգիտնալովը, կամ թէ աւելի ճիշդը ըսեմք՝ Այրարատայ գինւոյն ուժը չգիտնալովը՝ շատ կեկ խմեց, գինովցաւ, ու տանը մէջ առանց հանդերձի քնացաւ : Նոյայ որդւոցը մէջէն Քամ՝ իրեն հօրը պակասութեանը աչք փակելու տեղը, վազեց գնաց դուրսը մէկալ եղբարցը պատմեց . բայց նոքա հայրասիրութեան եւ համեստութեան քնական եւ պտուղաճաղիք օրէնքներուն հաւատարիմ ըլլալով, լայն հագուստ մը առին իրենց վրայ, ու ետ ետ երթալով գնացին իրենց հայրը ծածկեցին :

Նոյ երբոր արթնցաւ, ու իմացաւ Քամայ ըրածը, անէծք տուաւ անոր Քանան որդւոյն, կամ թէ մարգարէաբար գուշակեց որ Քամայ որդին Քանան եւ անոր սերունդը միւս եղբայրներուն ծառայու գերի պիտի ըլլայ, ինչպէս որ Հրեայք որ Սեմայ ցեղէն էին՝ տիրեցին Քանանացուց, այսինքն Քամայ եւ Քանանու թոռներուն : Իսկ Ցաբեթն ու Սեմը օրհնեց, եւ անոնց սերունդ-

ներուն մեծնալն ու ընելու յառաջադիմութիւնը գուշակեց :

Ծնողք իրենց զաւակացը միշտ օրհնենք պիտի տան , եւ ոչ թէ անէծք , ինչպէս որ ոմանք միամտութեամբ , իրենց սրտին իրաւացի կամ անիրաւ բարկութիւնը իջեցընելու համար կելլեն իրենց զաւակներուն անէծքներ կուտան . բայց զաւակներն ալ պիտի նային որ իրենց ծնողացը օրհնութեանը միայն արժանի ըլլան Սեմայ ու Յաբեթի պէս , նոցա ծերութեանը պակասութիւններուն աչք գոցելով :

Ինը հարիւր յիսուն տարեկան եղած ատենը վախճանեցաւ նոյ . եւ այն 350 տարուան մէջ որ ջրհեղեղէն ետքը ապրեր էր , մեծ մխիթարութիւն էր իրեն տեսնելը որ երկիրս նորէն սկըսաւ լցուիլ մարդիկներով , եւ ինքը անոնց ամենուն նախահայրն է իբրեւ նոր Ադամ մը :

Նոյայ գերեզմանը մինչեւ ցայժմ կցուցընեն աւանդութեամբ Հայաստանի հին Նախջուան քաղաքին մէջ , որ փոքրիկ շիրիմ (Թիւրպէ) մի է ցած , ու մէջը պարապ եւ ուխտատեղի է քրիստոնէից եւ տաճկաց առհասարակ : Կրսեն թէ այն Նախջուան քաղաքն ալ նոյ նահապետին շինած ու բնակած առաջին քաղաքն է , անոր համար ալ Նախջուան ըսուած է . այսինքն Նախիջեւան , առաջին իջեւան կամ բնակարան : — Խրիմու հին Հայերը այս անունը , այսինքն Նախջուան չօխրախ դերեր էին ատենով հիմակուան Գրինիչքի ըսուած գեղին : Յետոյ երբոր Ազովի գաւառը գնացին բազմութեամբ , այն տեղը՝ Տոն գետին եղերքը նոր Նախիջեւանը շինեցին , որ Ռուսաստանի այս կողմերուն ամենէն բազմամարդ հայաբնակ քաղաքն է :

Նոյայ այգի տնկած տեղը Ակոռի գեղն է , կրսեն , որ Արկոռի կստուգաբանուի , այսինքն այգի տնկուած տեղ , այս գեղը 1840-ին յունիսի 20-ին սոսկալի գետնաշարժովը բոլորովին տակն ու վրայ եղաւ :

Մասիս լեռան քովերն է նաեւ Մարանդ անունով գեղը , եւ կրսեն թէ հոն թաղուած է նոյի կինը նոյեմզար . անոր համար ալ Մարանդ ըսուեր է , այսինքն Մայր անդ , մեր մայրը հոն տեղն է :

Նոյայ որդիքը Սեմ , Քամ եւ Յաբեթ՝ աշխարհիս երեսը եղած ամենայն մարդկանց ցեղերուն գլխաւոր նահապետները կամ նախահայրները կհամրուին : Ընդհանրապէս կըսուի թէ Սեմայ որդիքը Ասիոյ արեւելեան ու հարաւային կողմերը բնակեցան , եւ անոնցմէ եւան Քաղդէացիք , Եբրայեցիք , Քաբէլացիք , Ասորիք եւ ուրիշ հին ազգեր : Յաբեթի ցեղէն են Հայք , Պար-

սիկք, Զինացիք, Հնդիկք, Յոյնք, եւ Ասիոյ հիւսիսային ու արեւմտեան կողմերը բնակող ուրիշ ժողովուրդներ որ հին ատենը ընդհանուր անունով Սկիւթացիք կըսուէին, եւ անոնցմէ տարածուեցան ոչ միայն եւրոպայի բնակիչները, հապա նաեւ Ամերիկացիները՝ հետզհետէ առաջ քալելով դէպ իհիւսիս ու արեւմուտք: — Իսկ Քամայ ցեղէն ելան գլխաւորապէս եգիպտացիք (Մսրբցիք), եթովպացիք (Հապէշները) ու Ափրիկէի ուրիշ սեւամորթ ազգերն ու ժողովուրդները:

Ասոնց ամենուն լեզուն ալ մէկ լեզու էր իսկզբան, այսինքն Նոյայ լեզուն՝ որ հարկաւ Ադամայ ալ խօսածն էր. եւ թէ որ այն լեզուն բերնէ բերան՝ տեղէ տեղ անցնելով քիչ շատ փոփոխութիւն ալ առեր էր, յայտնի բան է որ չէր կրնար քիչ ժամանակի մէջ այնչափ փոխուիլ որ մէկուն ըսածը մէկալը չհասկընայ:

Տեսնեմք թէ ի՞նչպէս եղաւ որ մարդկանց լեզուները յանկարծ խառնուեցան, ու այսչափ զանազան լեզուներ ձեւացան որ մինչեւ հիմա կգտնուին աշխարհիս երեսը:

Ջրհեղեղէն հարիւր կամ հարիւր քսան տարիի չափ ետքը մարդիկ տեսնելով որ Այրարատայ նահանգը եւ քովի երկիրները իրենց նեղ կուգան, խօսք դրին մէջերնին որ շատը մէկտեղ ելեն երթան աշխարհիս ուրիշ բարեխառն կողմերը հաստատեն իրենց բնակութիւնը: Մասիս լեռան հարաւային կողմէն իջան դէպ իստորեստանի ընդարձակ երկիրները. եւ երբ որ Սենաար ըսուած մեծ դաշտը հասան, ուր որ Տիգրիս ու Եփրատ գետերը մէկտեղ միանալով ծովը կթափին, խորհուրդը ին որ ասդիս անդին ցրուելէն առաջ՝ իրենց բազմութեանը, ուժին ու միաբանութեանը յիշատակ մը ձգեն աշխարհիս երեսը, այսինքն այնպիսի բարձր ու ամուր շէնք մը շինեն որ ամենեւին չկործանի: Ըսող կայ թէ իրենց մէկ միտքն ալ այս էր որ եթէ յանկարծ նորէն ջրհեղեղ պատահելու լինի, այն բարձր շէնքին կամ աշտարակին (խուլէին) վրայ ելեն ու ազատին: Աստուածաշնչին ըսածը այս է. «Եկէ՛ք մեզի քաղաք մը եւ այնպէս բարձր աշտարակ մը շինեմք որ գլուխը մինչեւ երկինք հասնի, եւ քանի որ աշխարհիս երեսը չեմք սփռուած, չեմք ցրուած, մեզի չմոռցուելու անուն ու յիշատակ մը թողումք»:

Սկսան հողէ աղիւս (Թուղլա) շինել, կրակով եփել, ու շաղախի կամ ծեփի տեղ ալ ձիւթ կամ կուպը գործածել. որով շատ ամուր ու մեծագործ բան պիտի լինէր այն շէնքը: Բայց Աստուած չհաւնեցաւ այն աշտարակը շինողներուն դիտաւո-

ըուծեանը (նիյէթին), որ կերեւնայ թէ ամբարտաւանութեամբ ու իրենց ուժին ու շատուորութեանը վրայ չափէ դուրս վստահանալով եւ գնասուած մոռնալով՝ բան առաջ տանիլ կուզէին : Մինչդեռ մեծ գործունէութեամբ կաշխատէին վրան, որը աղիւս կկարէր, որը կեփէր, որը կկրէր, որը կշարէր, որը կծեփէր, որը կկրամայէր, որը չափերը կորոշէր, — յանկարծակի Աստուած անոնց մտքին մէջ այնպիսի շփոթութիւն մը ձգեց որ լեզունին մոռցան, իրարու խօսքը սկսան չհասկընալ, խառնակութիւն մը ընկաւ մէջերնին, այնպէս որ իրենք ալ իմացան թէ այս աստուածային պատիժ մըն է. երեսի վրայ ձգեցին այն իրենց սկսած ու առաջ տարած շէնքը, ու ցրուեցան աշխարհիս ամէն կողմը : Սոսկալի՛ խրատ այն մարդկանց որ ծուռ կամ վատ դիտաւորութեամբ կմիաբանին գործ մը առաջ տանելու :

Յայտնի բան է թէ ո՛ր որ հասան ու մէկտեղ բնակեցան իւրաքանչիւր մօտաւոր ցեղ կամ ընտանիք, իրենց մէջ կամաց կամաց մէյմէկ լեզու ձեւացուցին՝ այն խառնուած լեզուին կրտորներէն . անով իրարու խօսք հասկըցան ու խօսք հասկըցուցին . եւ այնպէս ձեւացան ահա նախ աշխարհիս երեսի մայր լեզու կամ գլխաւոր լեզու ըսուածները, որ հարիւրի չափ կհամրուին, անոնցմէ ալ ելան հետզհետէ ուրիշ երկրորդական լեզուներ որ այժմ աշխարհիս ամէն կողմերը ցրուած մարդիկ կխօսին : Այժմու աշխարհագիրներու խօսքին նայելով՝ հիմա բոլոր աշխարհիս մէջ հազարէն աւելի լեզու կայ. բայց հաւանական է որ անոնց շատը բարբառ (տիալէքթ) ըսուելու են եւ ոչ լեզու, ինչպէս ահա մեր լեզուն մի միայն է, որ է գրաբարը, բայց մինչեւ երեսունի չափ բարբառ կհամրուի հայերէն՝ Հայաստանի մէջ եւ դրսի երկիրները :

Այն աշտարակին անունը հրեարէն Քաբիլոն ըսուեցաւ, որ խառնակութիւն կնշանակէ, եւ տեղը մինչեւ ցայժմ կերեւնայ Պաղտատ քաղաքին քովերը . անոր համար Պաղտատին ալ Բաբելոն ըսեր են :

Կըսեն թէ Բաբելոնի աշտարակը շինողներուն գլուխ կեցած էր Բէլ կամ Նեբրովթ անունով բռնակալը, որ զօրաւոր ու բարձրահասակ մարդ մըն էր . այս այն Բէլն է որ մեր Հայկ նահապետին դէմ պատերազմի ելաւ, ու անոր ձեռքէն զարնուեցաւ մեռաւ, ինչպէս որ Հայոց պատմութեանը մէջ պիտի լսէք :

Մարդուս մեծ պակասութիւններէն մէկն եղած է ամէն

ժամանակ՝ Աստուծոյ ընդունած բարիքը մոռնալ, իրեն ու-
ժին ու խելքին վրայ դնել յոյսը, իրեն փառքն ու հանգըս-
տութիւնը այս անցաւոր ու ցաւալից աշխարհիս վրայ փըն-
տուել, եւ իրեն մարմնոյն կարօտութիւնները լեցընելու այն
կերպով զբաղիլ որ կարծես թէ հոգի չունի, եւ իբր թէ այս
կեանքէն ետքը անդին յաւիտենական կեանք պիտի չունենայ:
Ասով ոչ միայն զԱստուծոյ ալ կմոռնայ մարդ շատ անգամ, այլ
եւ գրեթէ Աստուծոյ տեղ կպաշտէ ինքզինքը, իրեն շահը՝ վաս-
տակը, իրեն խնորժակն ու հանգստութիւնը. եւ աստուծա-
պաշտ ըլլալու տեղը կըլլայ անմնապաշտ, մարմնապաշտ, եւ մէկ
խօսքով՝ կռապաշտ, այսինքն սուտ ու շինծու աստուծոյ պաշ-
տող. վասն զի կռուք բառը կնշանակէ արձան, մարդու ձեռ-
քով շինուած աստուծոյ պատկեր: Զարմանալի ու ցաւալի՛ բան,
բայց եւ մարդուս ապականեալ բնութեանը գրեթէ անխորշելի
հետեւանք:

Բայք այսպիսի կռուքերը իրօք պաշտելը, կամ բուն կռա-
պաշտութիւնը, ջրհեղեղէն ետքը մտաւ կըսեն մարդկանց մէջ:
Սողոմոն իմաստունը կպատմէ թէ ատենով թագաւորի մը որ-
դին իրեն ծաղիկ հասակին մէջ մեռեր էր. հայրը ինքզինքը
մխիթարելու համար՝ անոր պատկերը կամ արձանը շինել տը-
ւաւ, շողքորթ իշխաններն ու միամիտ ժողովուրդներն ալ ըս-
կըսան անոր երկրպագութիւն ընել, իբր թէ կենդանի լինէր.
Եւ այս կերպով մտաւ մարդկանց մէջ կռապաշտութիւնը: — Ու-
րիշ ըսողներ կան թէ աշխարհիս մէջ առաջին կռուք պաշտել
տուողն եղաւ Բէլ կամ Նեբրովթ բռնաւոր հսկան, որ ինքզին-
քը Աստուծոյ տեղ դնել տալ կուզէր, եւ մեր Հայկ նահապե-
տին ձեռքովը սպաննուեցաւ: — Ոմանք ալ կըսեն թէ մարդիկ
առաջ արեւը, լուսինն ու աստղերը սկսան պաշտել, յետոյ կրա-
կը, կրակէն ետքն ալ այն ամենայն մարդկանց արձանները կամ
պատկերներն որ իրենց կենդանութեան ատենը բարի կամ չար
գործով մը անուանի եղեր էին: — Ըսող ալ կայ թէ կռապաշ-
տութեան սկիզբը եղած է՝ աշխարհիս մէջ չարն ու բարին միշտ
խառն տեսնուածէն. իբր թէ մարդիկ տեսնելով որ աշխար-
հիս երեսը բարին չարէն այնչափ ստարբեր բան է որ կարելի
չէ ըսելն որ մէկ Աստուծոյ մը միայն կայ՝ ամէն բանի ստեղծող,
մտքերնին դրեր են թէ բարի բաները ստեղծողը ուրիշ Աստուծոյ
է, չար բաները ստեղծողն ալ ուրիշ. ասով սկսեր է բազմաս-
տուծութիւնը, այսինքն երկու կամ շատ աստուծոններ պաշ-
տելը, որով եւ կռապաշտութիւնը:

Քայց ասոր տարակոյս չկայ որ կռապաշտութեան առաջին եւ բուն աղբիւրները մէյմը մարդկանց սրտին ապականութիւնն է, մէյմալ անոնց տգիտութիւնը, որով Աստուծոյ տեղ կոնեն ու կպաշտեն իրենց նման արարածները՝ անոնց վրայ մէկ երկու իրաւ կամ սուտ աղէկութիւններ տեսնելով: Այնպէս որ ջրհեղեղին ատենէն մինչեւ մեր օրերը մարդիկ ու ժողովուրդներ գտնուեր են որ գրեթէ ամէն բան, մինչեւ սոխն ու սխտորն ալ, Աստուծոյ տեղ դրեր ու պաշտեր են յիմարութեամբ, ինչպէս որ Աշխարհապատմութեան մէջ պիտի լսէք:

Քրիստոսի թուականէն 2000 տարիի չափ առաջ, երբոր գրեթէ բոլոր աշխարհք կռապաշտութիւնը տիրած էր, Քաղդէացւոց երկրին մէջ — որ այժմու Պաղտատին կողմերն է — Ուր քաղաքը՝ Աբրամ անունով մէկը կար՝ նոյնահապետին Սեմ որդւոյն ցեղէն: Աստուած կամեցաւ որ իրեն ընտրած ու հաւատացեալ ազգին նախահայրը այն Աբրամ նախապետը լինի: Աբրամու հայրը Թարա կռապաշտ էր. ըսող կայ թէ Աբրամ ալ առաջ հօրը հաւատքէն էր, այսինքն կռապաշտ, բայց յետոյ միտքը լուսաւորուեցաւ, ճշմարիտ Աստուածը ճանչցաւ, իր հօրն ալ աստուածապաշտ դառնալուն պատճառ եղաւ: Հրեայք, եւ անոնցմէ առնելով մահմէտականք ալ, կրսնն թէ Աբրամ կռապաշտութենէ ետ կենալուն համար՝ վառուած փուռ մը ձգուեցաւ ու հրաշքով ողջ մնաց մէջը: Բայց կերեւնայ որ այս անհիմն աւանդութիւնը մտած է նոցա մէջ՝ Աբրահամու Ուր քաղաքէն եղածին պատճառաւ. վասն զի Ուր բառը քաղդէարէն հոլը կամ կրակ կնշանակէ:

Սուրբ գիրքը կպատմէ մեզի թէ Աստուած ըսաւ Աբրահամու. «Այդ քու երկրիդ ու ժողովրդեանդ մէջէն ել ու քեզի ցուցընելու երկիրս եկուր. — ե՛լ յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ, եւ եկ յերկիր զոր ցուցից քեզ»: Աբրամ հնազանդեցաւ Աստուծոյ հրամանին, հետը առաւ իրեն ընտանիքն ու Թարա հայրը եւ գնաց Միջագետաց Խառան քաղաքը, եւ անկէց Քանանացւոց երկիրը, որ Պաղեստինն ու Հրէաստանն ալ կրսուի: Հրամայեց Աստուած որ Աբրամ ելլէ այն երկիրը աչքէ անցընէ. եւ ըսաւ իրեն որ բոլոր այս տեղերը քու զաւակներուդ պիտի տամ. սակայն Աբրամ այն երկրին մէջ, ամենեւին գետին մը չգնեց, ու այն ժամանակի շատերուն սովորութեանը նման՝ վրանով (չատրրով) կընակէր, ու տեղէ տեղ փոխադրուելով՝ պանդուխտի (խարիպ մարդու) կեանք կանցընէր: Հաստատուն էաւատով բոլոր իր յոյսը Աստուծոյ խոստմանը վրայ դրած՝ կմտածէր որ

եթէ ինքը աստուածաշտուածենէ ու արդարութենէ ետ չկենայ, Աստուած անշուշտ իւր խոստմունքը կկատարէ՝ իրեն խելքէն մտքէն վեր կերպով:

Այն ասեմները Քանանացոց երկրին մէջ սով՝ քաղցածութիւն եղաւ. Աբրամ ալ առաւ ընտանիքը՝ եգիպտոս գնաց, ուր որ առատութիւն էր: Աղէկ գիտնալով այն երկրին բնակիչներուն քարքն ու բնաւորութիւնը, վախցաւ որ իր ամուսնոյն Սարայի տեսքը պատճառ չըլլայ իրեն մահուանը. այսինքն եգիպտացիք զինքը չմեղցընեն՝ Սարան ձեռքէն առնելու համար: Խորհուրդ ըրաւ Սարային հետ որ երկուքն ալ իրենց հարցընողներուն պատասխան տան թէ Սարան իրեն քոյրն է. եւ այս սուտ չէր, վասն զի Սարան Աբրահամու ազգական էր, եւ հին ազգաց շատին մէջ այս սովորութիւնը կար, մինչեւ հիմայ ալ արեւելեան ժողովրդոց մէջ շատ տեղ կգտնուի, որ մօտաւոր ազգականին եղբայր կամ քոյր կըսեն:

Եգիպտացոց Փարաւոն թագաւորը Սարային գեղեցկութեան համբաւը լսելով՝ ուզեց զինքը իրեն կին առնուլ. բայց Աստուծոմէ այնպիսի կարգէ դուրս պատիժներ եկան վրան, որ հասկըցաւ ընել ուզած գործոյն անիրաւութիւնը, ու պատուով եւ ընծաներով դարձուց Սարան Աբրամու:

Այն սովէն ետքը Աբրամ դարձաւ եգիպտոսէն Քանանացոց երկիրը, հետն ալ իրեն եղբօրորդին Ղովտ. եւ որովհետեւ երկուքն ալ շատ ոչխարներու տէր էին, ու մէկտեղ կենալը երկուքին ալ նեղութիւն էր, — վասն զի իրենց հովիւները շատ անգամ իրարու դէմ կռիւ կբանային, — սիրով բաժնուեցան մէկմէկէ. Ղովտ գնաց Սոդոմ քաղաքը բնակեցաւ, Աբրամ ալ Քեբրոն քաղաքին քովը՝ Ձոր Մամբրէի ըստած տեղը: Քանանացոց երկիրը, որ Աւետեաց երկիր ալ կըսուի, յիբաւի Մովսէս մարգարէին ըսածին պէս՝ կաթ ու մեղր բխեցընող երկիր էր այն ժամանակները, եւ անկէց ետքն ալ հազարաւոր տարիներ. ինչպէս որ կվկայեն նաեւ հին ատենի օտարազգի երեւելի պատմիչները. թէպէտ եւ հիմա բոլոր այն երկիրը քարոտ ու չոր ցամաք աւերակ դարձած է: Աստուածաշունչը կըսէ թէ այն բարեբեր երկրին մէջ՝ Սոդոմ ու Գոմոր քաղաքներուն քովի երկիրներն ալ ետքի աստիճանի պտղաբեր էին, ու դրախտին պէս զարդարուած. անոր համար Ղովտ հոն գնաց բնակելու:

Քանը մը տարի ետքը այն կողմերու մանր մանր տէրութիւններ ունեցող թագաւորներէն Քոդողագոմոր անունով թագաւորը պատերազմ բացաւ իրեն դաշնակից թագաւորներովը

Սողոմ քաղաքին ու անոր քով եղած չորս քաղաքաց Թագաւոր-
ներուն դէմ, ու յաղծեց անոնց . ուրիշ գերիներուն հետ Ղովտն
ալ գերի ըրաւ : Աբրամ այն բանն որ լսեց, իսկոյն իր մարդիկ-
ներն առաւ, որ 218 հոգի էին, գնաց Քողոզագոմորին վրայ,
յաղծեց անոր ու Ղովտը ազատեց :

Ետ դարձած ժամանակը Սաղիմ քաղաքին քովէն կանցնէր,
որ երուսաղէմ քաղաքը կկարծուի . անոր Թագաւորը Մելքի-
սեդեկ, որ քահանայ ալ էր, առջեւն ելաւ, շատ մը օրհնենք-
ներ տուաւ Աբրամու, եւ հաց ու գինի տուաւ անոր ու քովի
մարդիկներուն . կամ Թէ ինչպէս որ ուրիշները կհասկընան, հաց
ու գինի նուիրեց Աստուծոյ՝ շնորհակալութեան համար . Աբրամ
ալ իրեն ունեցածէն տասանորդ տուաւ Մելքիսեդեկի : Այս
Մելքիսեդեկ Թագաւորին ո՛վ եւ ուսկի՞ց կամ որո՛ւ որդին եղա-
ծը յայտնի չէ սուրբ գրքէն . անոր համար Պօղոս առաքեալ զին-
քը օրինակ կբերէ Քրիստոսի Տեառն մերոյ, որոյ Թագաւորու-
թիւնն ու քահանայապետութիւնը յաւիտենական ըլլալով՝ հաս-
րակ մարդկանց պէս ազգաբանութիւն չէր կրնար ունենալ ըստ
աստուածութեան : Եւ Թէպէտ արտաքին պատմիչները զանա-
զան պատմութիւններ կպատմեն վրան, բայց այն պատմու-
թիւնները հաստատութիւն մը չունին : Օրինակի համար, անոնց-
մէ մէկը միայն հոս յիշատակեմք :

Կրսեն Թէ այն ատենները Մելքի անունով կռապաշտ Թա-
գաւոր մը կայ եղեր, Մելքիսեդեկը անոր որդին եղած կըլլայ :
Օր մը հայրը կուռքերուն զոհ մատուցանել ուզելով՝ կղրկէ որ-
դին որ երթայ եօժը հատ հորթ բերէ : Ճամբան Աստուած լոյս
կուտայ տղուն, կճանչնայ կուռքերուն սուտ եղածը, կդառ-
նայ հորն ալ իրատ կուտայ որ ետ կենայ կռապաշտութենէն :
Հայրը կբարկանայ վրան, կառնու իր անդրանիկ որդին՝ Մել-
քիսեդեկին մեծ եղբայրը, կմործէ կզոհէ կուռքերուն, անոր
հետ ալ ուրիշ շատ տղաք : Ասոր վրայ Մելքիսեդեկ սարսափած՝
կբաշուի կերթայ Թափօր լեռը եւ եօժը տարի հոն կճգնի մի-
նակ : Աբրամ Աստուծոյ հրամանովը կերթայ Մելքիսեդեկը կը-
գտնէ հոն, օրհնենքը կառնու, եւ կդառնայ տեղը : Այսպիսի
պատմութեանց շինծու եղածը ապացուցի կարօտ չէ . բայց մենք
երբեմն անոր համար կպատմեմք որ իմացուի Թէ սուրբ գրոց
պատմութեանը մէջ ալ դրսէն սուտեր խառնուիր նոր բան չէ,
բայց պէտք չէ որ հաւատացեալքս խաբուինք ու չկարենանք
սուտը ճշմարիտէն զատել, այլ զգուշանամք :

Աստուած նորէն երեւցաւ Աբրամու եւ խոստացաւ որ անոր

զաւակները այնպէս շատցնէ որ ծովի աւազին (խումին) պէս ու երկնքի աստղերուն պէս անթիւ անհամար ըլլան: Եւ որովհետեւ Աբրամ մինչեւ այն ժամանակը անզաւակ մնացած էր, այն ատենի Թոյլ տրուած բազմակնութեան օրէնքին համեմատ Աբրամ իրեն Ագար աղախինն ալ Սարային առաջարկութեամբ կին առաւ: Երբոր Ագար սկսաւ Սարային հետ արհամարհանօք վարուիլ, Սարա ալ հանգստութիւն չտուաւ Ագարայ, պէտք եղաւ որ Ագար ձգէ փախչի. բայց հրեշտակը դիմացն ելաւ խրատ տուաւ անոր որ դառնայ հնազանդ մնայ իրեն տիկնոջը:

Աբրամ Ագարէն ունեցած որդւոյն անունը Իսմայէլ դրաւ, Աստուած ալ նորէն խոստմունքներ ըրաւ Աբրամու, եւ այսուհետեւ Աբրամ աւ ըլլայ անունդ ըսաւ, որ հայր բազմութեան ազգաց կնշանակէ, Սարային անունն ալ դրաւ Սառա կամ Սարրա, որ Թագուհի կնշանակէ:

Նոյն ժամանակը կամեցաւ Աստուած զգալի նշան մըն ալ տալ Աբրահամու եւ անոր զաւակացը՝ իրեն նոցա հետ դրած ուխտին եւ խոստմանցը, այսինքն Թափառութիւնը, որ Թէպէտ Քրիստոսական եկեղեցւոյ սուրբ խորհուրդներուն զօրութիւնը չունէր, բայց օրինակ էր մկրտութեան խորհրդոյն՝ որ իՔրիստոսէ հաստատուեցաւ Իթողութիւն մեղաց:

Քիչ մը ժամանակէն ետեւ Աստուած սարսափելի պատուհասով մը պատժեց Սոդոմ ու Գոմոր քաղաքներուն եւ անոնց քովի երեք քաղաքին բնակչաց անօրէնութիւնը, զոր սուրբ գիրքը այս կերպով կ'պատմէ:

Աստուած ըսաւ Թէ Սոդոմացւոց ու Գոմորացւոց աղաղակը բարձրացաւ, այսինքն անոնց անզգամութեան չափը անցաւ. պէտք է որ պատիժները տամ. իջնամ տեսնեմ Թէ յիրաւի այն աստիճանի անկարգացե՞ր են Թէ չէ: «Աղաղակ Սոդոմացւոցն եւ Գոմորացւոց բարձրացաւ. արդ իջեալ տեսից՝ եթէ ըստ աղաղակին որ յիսն հասանէ՞ վճարիցե՞ն. ապա Թէ ոչ՝ զի գիտացից»: Երեք հրեշտակ զրկեց որ իր հրամանը կատարեն: Անոնք առաջ Աբրահամու վրանն եկան որ Մամբրէի ձորին մէջ էր: Աբրահամ տեսածին պէս, առանց գիտնալու ալ անոնց հրեշտակ եղածը, վազեց առջեւներն ելաւ, ներս հրամցուց, ջուր բերաւ՝ ոտքերը լուաց, ինչպէս որ մինչեւ հիմա արեւելքի տաք կողմերը մնացած է այս հիւրասիրական սովորութիւնը, եւ աղաչեց որ կերակուր մը ուտեն:

Վազեց գնաց Աբրահամ, ապսպրեց Սառային որ հաց եփէ, որ տաք մոխրի մէջ եփուած բաղարջ էր, ինքն ալ ուլ մը՝ այս-

ինքն այժու ձագ մը մորթեց, եփեց ու հրեշտակներուն առջեւ դրաւ որ ուտեն : Կերակրէն ետեւ հարցուցին Աբրահամու թէ « Ո՞ր է Սառա կինդ : — Անդին վրանին մէջն է » ըսաւ Աբրահամ : Հրեշտակներէն մէկը պատասխանեց թէ « Եկած տարի աս ատեններս նորէն պիտի գամ, ու այն ատենը Սառան զաւակ մը պիտի ունենայ » : Սառան որ դրանը ետեւը կեցած մտիկ կընէ եղեր՝ մտքէն կծիծաղի կխնտայ : Կհարցընէ հրեշտակը թէ « Ինչո՞ւ ինտաց Սառան » . նա կջանայ ձեւացընել թէ ոչ դրսէն ծիծաղեր է եւ ոչ մտքէն . բայց հրեշտակը՝ թերեւս հասկըցընել ուզելով թէ իրենք հոգի են, ու դիմացինին միտքը կրնան հասկընալ, հաստատեց Սառային ծիծաղածը :

Հրեշտակներն որ Ֆամբայ ելան դէպ իՍողոմ երթալու, Աբրահամ ալ պատուոյ համար քիչ մը տեղ հետերնին գնաց : Երբ որ երկուքը առջեւէն կերթային, մէկը դարձաւ յայտնեց Աբրահամու իրենց ի՞նչ բանի համար Սողոմ երթալը : Աբրահամու բնական գուժը շարժեցաւ, եւ իհարկէ վախցաւ որ իր եղբորորդին Ղովտ ալ ընտանիքովը հանդերձ՝ Սողոմացւոց պատժին տակը չիյնայ : Դարձաւ հարցուց հրեշտակին, որոյ ո՛վ լինելը անշուշտ հասկըցեր էր . « Մի՞թէ արդա՞րն ալ ամբարշտին հետ մէկտեղ պիտի պատժես : Թէ որ այն քաղաքին մէջ 50 արդար գտնուի, մի՞թէ այն 50-ին համար միւս քաղաքացւոց չե՞ս ներեր : — Թէ որ 50 արդար գտնուի մէջերնին, նոցա սիրոյն համար մէկալներուն ալ կինայեմ » ըսաւ հրեշտակը : Աբրահամ այս պատասխանէն սիրտ առաւ ու հարցուց թէ 50-էն հինգ պակաս որ ըլլան արդարները, դարձեալ կներե՞ս մնացածներուն : — Թէ որ 45 արդար գտնուի մէջերնին, մէկալներուն ալ կինայեմ ըսաւ : Աբրահամ տագնապեցաւ, բայց թողուժին ինդրելով նորէն հարցուց թէ « Հապա թէ որ 20 արդար գտնուի մէջերնին » : — Քսան ալ գտնուի՛ կներեմ մէկալներուն » ըսաւ : Վերջապէս մինչեւ տասնի իջաւ Աբրահամ, ու երբոր լըսեց որ տասը արդար ալ լինի նէ այն հինգ քաղաքներուն մէջ Աստուած պիտի չկործանէ զանոնք, չհամարձակեցաւ նորէն բան ըսելու . բայց յոյս առաւ թէ չեն կործանիր, վասն զի կարծէր թէ տասը արդար անպատճառ կգտնուի . ուստի եւ դարձաւ իրեն տեղը . հետը խօսող հրեշտակն ալ աներեւոյթ եղաւ : Իսկ միւս երկու հրեշտակները իրիկուան դէմ գնացին հասան Սողոմ :

Ղովտ քաղաքին դուռը նստած էր . այն երկու Ֆամբորդները տեսածին պէս՝ ելաւ անոնց առջեւն ու շատ աղաչանքով ի-

բեն տունը հրամցուց, ու կերակուր տուաւ անոնց: Քանի որ դեռ հանգստանալու չէին գնացեր, քաղաքին բնակիչները մեծ ու պզտիկ եկան ժողվուեցան Ղովտայ դրան առջեւն ու կպահանջէին որ Ղովտ այն երկու օտարականները իրենց ձեռքը մատնէ: Ղովտ դուրս ելաւ. շատ մը աղաչանքներով աշխատեցաւ անոնց խօսք հասկըցընելու որ ետ կենան իրենց չար դիտաւորութենէն, ու տունը եկած հիւրերուն (միւսաֆիրներուն) վրնաս մը չընեն. բայց նոքա սկսան Ղովտայ դէմ ալ սպառնալիքներ ընել՝ անոր օտարական եղածը երեսին զարնելով, եւ քիչ մնաց որ դուռը կոտրտէին:

Այն ատեն հրեշտակները իրենց հրեշտակային զօրութիւնը ցուցուցին. քաշեցին ներս առին Ղովտը, եւ այն դրսի անըզգամ մարդիկը, որ արդէն կոյր էին հոգևով, մարմնով ալ կուրացուցին, այնպէս որ տանը դուռը ո՛րն եղածն ալ չկրցան գտնել: Յետոյ յայտնեցին Ղովտայ իրենց հոն գալուն պատճառը, եւ ստիպեցին զինքն որ բոլոր իր ազգականներն ալ հանէ անկից. վասն զի Աստուած այս քաղաքը պիտի կործանէ, ըսին: Ղովտ գնաց իմացուց այս բանը իր երկու փեսաներուն. բայց նոքա ծիծաղեցան վրան. կերեւնայ թէ անոնք ալ այն ատենին ու քաղաքին իրենք զիրենք լուսաւորեալ մարդիկ կարծողներէն էին:

Առաւօտը լուսանալուն պէս՝ տեսան հրեշտակներն որ Ղովտ ու իրենները կը անդադին քաղաքէն ելլելու. առին անոնց ձեռքերէն ու հանեցին քաղաքէն դուրս. «Շուտ ըրէք փախէք, ըսին. ետեւնիդ ամենեւին մի՛ նայիք. նայեցէք որ ինքզինքնիդ լեռը ձգէք, չէ նէ դուք ալ կբռնուիք»:

Աղաչեց Ղովտ հրեշտակներուն որ հրաման տան իրեն՝ Սեգովը անունով փոքիկ քաղաքը իյնալու, որ հեռու չէր անկէց, ու կործանելու հինգ քաղաքներէն մէկն էր: Հրեշտակներն ալ կատարեցին Ղովտայ խնդիրը, հրաման տուին որ հոն քաշուի, ու այն քաղաքը չկործանեցին: Իսկ մէկալ չորս քաղաքներուն վրայ սոսկալի անձրեւ մը եկաւ բռնկած ծծումբէ (քիւքիւրտէ), թերեւս գետինն ալ պատուեցաւ ու ծծմբային ջրերը դուրս ցատքեցին, եւ այն չորս ամբարիշտ քաղաքները, որ էին Սոդոմ, Գոմոր, Աբամա եւ Սեբոյիմ, էրեցան մրկեցան, տակն ու վրայ եղան:

Ղովտայ կինը՝ հրեշտակներուն ապսպրածը մոռցաւ, կամ բանի տեղ չդրաւ. դարձաւ ետեւը նայեցաւ՝ գուցէ աւելորդ հետաքրքրութեամբ, կամ թէ քաղաքին ու քաղաքացոց լվրայ խղճալով, ու իսկոյն աղէ արձան դարձաւ. այսինքն երկնքէն թափած ծծմբոտ ու աղբորակոտ անձրեւին բռնուեցաւ ու քար

դարձածի պէս պաղեցաւ կամ էրեցաւ ու մեռաւ : Իսկ Ղովտ ու
Երկու աղջիկները առաջ Սեգովը գնացին, բայց հոն ալ մնալու
վախցան, լեռը քաշուեցան :

Սողում ու Գումոյ քաղաքներուն տեղը, կամ Թէ անոնց աւե-
րակներուն մօտ եղած երկիրը ջուր կոխեց եւ հիագին լիճ մը
ձեւացաւ, որ մինչեւ հիմա Մեռեալ ծով կըսուի, եւ ջուրը
սաստիկ նաւթոտ ու ծծմբոտ ըլլալով՝ ուրիշ ամէն ջրերէն ծանր
է : Իսկ այն ծովուն տխուր եզերքը մինչեւ ցայժմ անբեր ապա-
րաժ դարձած են . ծառերուն պտուղները դըսէն տեսք ալ ու-
նենան՝ ներսէն փտտած են, եւ բոյսերը ձուգած ու անպիտան :
Սոսկալի՝ նշան Աստուծոյ արդար բարկութեանը ընդգէմ այն
գարշեթի մեղաց որ բնութեան օրէնքներուն ալ հակառակ են :

Երուսաղեմի կողմերը գնացողներուն մինչեւ հիմա կցուցը-
նեն Ղովտայ կնոջ արձանը, որ ապառաժ քարի կտոր մըն է .
բայց այն արձանը եղածը ամենեւին ստոյգ չէ . մանաւանդ որ
ո՛րը Մեռեալ ծովուն արեւելեան կողմը կցուցընէ այն ապարա-
ժը, որը արեւմտեան կողմը, որը հիւսիս՝ որը հարաւ, որն ալ
Մեռեալ ծովին ջրերուն մէջ :



76

0023390

2013

